ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՄԵԾ ՊԱՐՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«07» 04 2020թ.
հեռ. (0255) 6-18-97
mail: metsparni.lori@mta.gov. am
թիվ ՄՊ-105/ 2020թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ի կատարումն Ձեր 20.01.2020թ. թիվ 01/107.3/00404-2020թ. գրության.

Կից Ձեզ եմ ներկայացնում Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ավագանու 2020թ. ապրիլի 8-ին ժամը 12:00-ին կայանալիք ավագանու արտահերթ նիստի օրակարգը և որոշումների նախագծերը:

Առդիր 9 թերթ

Մեծ Պարնի համանքի ղեկավար՝ Գ. Պալյան

ՕՐԱԿԱՐԳ

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ. ԱՊՐԻԼԻ 8-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. Մեծ Պարնի համայնքի ավագանու 2020թ. ապրիլի 8-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

Զեկ. Գ. Պալյան

2. Մեծ Պարնի համայնքի համայնքի ղեկավարի հաղորդումը 2020թ. բյուջեի 1-ին եռամսյակի կատարման վերաբերյալ:

Զեկ. Գ. Պալյան

3. Մեծ Պարնի համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Զեկ. Գ. Պալյան

4. Սուբվենցիոն ծրագրերին հավանություն տալու վերաբերյալ:

Զեկ. Գ. Պալյան

5. Մեծ Պարնի համայնքի ավագանու 2020թ. մարտի 12-ի թիվ 11-Ա որոշումը անվավեր ճանաչելու մասին:

Զեկ. Գ. Պալյան

6. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

Զեկ. Գ. Պալյան

7. Մեծ Պարնի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից մրցույթով վարձակալությամբ տալու մասին:

Զեկ. Գ. Պալյան

8. Մեծ Պարնի համայնքի ավագանու հերթական նիստի օրը սահմանելու մասին:

Զեկ. Գ. Պալյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Պալյան

ՆԱԽԱԳԻԾ

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2020** Թ.
ԱՊՐԻԼԻ **8**-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԱՎԱԳԱՆՈՒ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գ. Պալյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Մեծ Պարնի համայնքի ավագանին

որոշում է

Հաստատել Մեծ Պարնի համայնքի ավագանու 2020թ. ապրիլի 8-ի արտահերթ նիստի օրակարգը

1. Մեծ Պարնի համայնքի ավագանու 2020թ. ապրիլի 8-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

Զեկ. Գ. Պալյան

2. Մեծ Պարնի համայնքի համայնքի ղեկավարի հաղորդումը 2020թ. բյուջեի 1-ին եռամսյակի կատարման վերաբերյալ:

Զեկ. Գ. Պալյան

3. Մեծ Պարնի համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Զեկ. Գ. Պալյան

4. Սուբվենցիոն ծրագրերին հավանություն տալու վերաբերյալ:

Զեկ. Գ. Պալյան

5. Մեծ Պարնի համայնքի ավագանու 2020թ. մարտի 12-ի թիվ 11-Ա որոշում անվավեր ճանաչելու մասին:

Զեկ. Գ. Պալյան

6. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

Զեկ. Գ. Պալյան

7. Մեծ Պարնի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից մրցույթով վարձակալությամբ տալու մասին:

Զեկ. Գ. Պալյան

8. Մեծ Պարնի համայնքի ավագանու հաջորդ ավագանու նիստի օրը սահմանելու մասին:

Զեկ. Գ. Պալյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ

ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

_____

/Զեկ. Գ. Պալյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «ՏԻՄ» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝ Մեծ Պարնի համայնքի ավագանին

որոշեց

Մեծ Պարնի համայնքի ղեկավարի հաղորդումը 2019թ. բյուջեի 1-ին եռամսյակի կատարման վերաբերյալ՝ ընդունել ի գիտություն:

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 Թ.
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 -Ի << ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ.
ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 41 -Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

_____

/Զեկ. Գ. Պալյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 և 34 հոդվածներով՝

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է.

1. Մեծ Պարնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23 -ի << Մեծ Պարնի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 41 -Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ
ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գ. Պայլան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով և հաշվի առնելով Մեծ Պարնի համայնքի ղեկավարի առաջարկությունը

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Մեծ Պարնի համայնքի ղեկավարին ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային երկու հայտ ներկայացնելու և դրանց իրականացման համար համայնքի կողմից կատարվելիք ներդրումները Մեծ Պարնի համայնքի 2020թ.-ի բյուջեից կատարելու համար.

ա) Ծրագիր 1. <<ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում արևային էլեկտրակայանով սնվող գիշերային լուսավորության համակարգի կառուցում >>, համայնքի բյուջեից ներդրումը՝ 8536600 (ութ միլիոն հինգ հարյուր երեսուն վեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

բ) Ծրագիր 2. <<ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի մշակույթի տան ամրացման և մարզադահլիճի հիմնանորոգման աշխատանքներ >>, համայնքի բյուջեից ներդրումը՝ 24216100 (քսան չորս միլիոն երկու հարյուր տասնվեց հազար հարյուր) ՀՀ դրամ:

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020Թ. ՄԱՐՏԻ 12-Ի ԹԻՎ 11-Ա ՈՐՈՇՈՒՄԸ
ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գ. Պալյան/

Ղեկավարվելով <<Նորմատիվ Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով
Մեծ Պարնի համայնքի ավագանին

Որոշեց

Մեծ Պարնի համայնքի ավագանու 2020թ. մարտի 12-ի թիվ 11-Ա որոշումը ճանաչել անվավեր:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ՐՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գ. Պալյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 10-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՐՃԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գ. Պալյան/

Քննարկելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեծ Պարնի համայնքի սեփականություն համարվող հողամասերը աճուրդով օտարելու մասին և ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով Մեծ Պարնի համայնքի ավագանին

Որոշեց

1. Մեծ Պարնի համայնքի սեփականություն հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 06-075-0242-0213 ծածկագրի 0.2568 հա վարելահողը մրցույթային կարգով տալ վարձակալությամբ՝ տարեկան 5000 դրամ մեկնարկային վարձավճարով, մասնակցության վճարը 3000 դրամ:
2. Մեծ Պարնի համայնքի սեփականություն հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 06-075-0243-0006 ծածկագրի 13.42975 հա վարելահողը մրցույթային կարգով տալ վարձակալությամբ՝ տարեկան 239 000 դրամ մեկնարկային վարձավճարով, մասնակցության վճարը 3000 դրամ:
3. Մեծ Պարնի համայնքի սեփականություն հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 06-075-0214-0038 ծածկագրի 16.6616 հա վարելահողը մրցույթային կարգով տալ վարձակալությամբ՝ տարեկան 171 000 դրամ մեկնարկային վարձավճարով, մասնակցության վճարը 3000 դրամ:
4. Մեծ Պարնի համայնքի սեփականություն հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 06-075-0214-0036 ծածկագրի 1.26564 հա վարելահողը մրցույթային կարգով տալ վարձակալությամբ՝ տարեկան 12962 դրամ մեկնարկային վարձավճարով, մասնակցության վճարը 3000 դրամ:

ՆԱԽԱԳԻԾ

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գ. Պալյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով Մեծ Պարնի համայնքի ավագանին

որոշում է

Մեծ Պարնի համայնքի ավագանու հերթական նիստի օրը նշանակել 2020թ. հունիսի 8-ը: